3. **Литературовеческий словарь.-** М.: Просвещение, 1989.
4. **Довлатов С. Д.** Записные книжки. –СПб.: Азбука–Классика, 2012. - 410с.
5. **Актеры, дяди, экзистенциалисты**: Интервью журналу Newsweek.- 1989, 24 апреля.

Բ.Ժ. ԳԱԼՍՏՅԱՆ

ԷԿԶԻՍՏԵՆՑԻԱԼԻԶՄԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Վ.ՍԱՐՈՅԱՆԻ ԵՎ Ս.ԴՈՎԼԱԹՈՎԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Քննվում են էկզիստենցիալիզմի փիլիսոփայական օրինաչափությունները Վ.Սարոյանի և Ս. Դովլաթովի ստեղծագործություններում:

Առանցքային բառեր. էկզիստենցիալիզմ, սահմանային իրավիճակ, մտորում, անհեթեթություն, մտածողություն, կեցություն:

B.J. GALSTYAN

PHILOSOPHICAL LAWS OF EXISTENTIALISM IN THE WORKS BY WILLIAM SAROYAN AND SERGEI DOVLATOV

The philosophical laws in the works by William Saroyan and S.Dovlatov are considered.

***Keywords*:** existentialism, boundary situation, thinking absurdity, thinking and being, literature.

ՀՏԴ 377.1:82

Հ.Թ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐՏԱԼՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԵՐԸ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (ԳՐԱԿԱՆ ՎԻԿՏՈՐԻՆԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ներկայացվում է խմբային հետազոտության մեթոդով, վիկտորինայի ձևաչափով արտալսարանային աշխատանքների կատարման արդյունավետ աշխատանքային փորձ:

Առանցքային բառեր. խմբային հետազոտության մեթոդ, Խ.Աբովյան, արտալսարանային աշխատանք:

Ներածություն: Դասի դաստիարակչական և ուսումնական բաղկացուցիչները կարևոր են և փոխկապակցված: Դրանք, այնուամենայնիվ, մանկավարժին առաջադրում են հարցեր՝ ինչպես սովորեցնել արդյունք ստանալու համար, ինչ անել՝ ուսուցման գործընթացն ավելի հետաքրքիր և գրավիչ դարձնելու

համար, ինչպես կարողանալ ուսանողին պասսիվ ունկնդրի կարգավիճակից դարձնել դասապրոցեսի ակտիվ դերակատարը և ինչպես ուսանողին շահագրգռել լավ կատարելու իր աշխատանքը՝ ուսումը: Ի.Պ.Պոդլասին տեսության և մեթոդի համեմատությունն այսպես է բնութագրում. «Մանկավարժական տեսությունը աբստրակցիա է, նրա գործնական կիրառումը՝ բարձր արվեստ» [1, 12]: Յուրաքանչյուր մանկավարժ իր համար հենց այդ բարձր արվեստին հասնելու նշաձող է սահմանում և դասընթացի շրջանակներում փորձում հասնել դրան:

Ուսուցման նորարարական մոդելների շարքում, սովորաբար, առանձնացվում են երեքը՝ պասսիվ, ակտիվ և ինտերակտիվ ռեժիմներ: Պասսիվ մոդելի առանձնահատկությունը ուսուցանող միջավայրի ակտիվությունն է, ինչը նշանակում է, որ աշակերտները յուրացնում են նյութը ուսուցչի խոսքից կամ դասագրքի տեքստից:

Ակտիվ մոդելը խթանում է սովորողների իմացական գործունեությունը և ինքնուրույնությունը: Այս մոդելի նախապայմանը ստեղծագործական առաջադրանքների առկայությունն է և պարտադիր շփումը աշակերտ-ուսուցիչ համակարգում: Որպես մոդելի թերություն՝ կարելի է նշել այն, որ ուսանողները ուսումնական գործընթացում փոխգործակցում են միայն ուսուցչի հետ: Փաստորեն, այս մոդելին բնորոշ է միակողմանի ուղղվածությունը:

Ինտերակտիվ մոդելի նպատակն է կազմակերպել ուսուցման այնպիսի պայմաններ, որոնց առկայությամբ ուսանողները ակտիվորեն փոխգործակցում են: Ինտերակտիվ ուսուցման կազմակերպումը ենթադրում է կենսական իրավիճակների մոդելավորում, դերային խաղերի օգտագործում, հարցերի և խնդիրների ընդհանրացնող հետևություն՝ հանգամանքների և իրավիճակների վերլուծության հիման վրա, որը դրդում է ակտիվ գործունեության: Այդ իսկ պատճառով, դասի կառուցվածքում ներառվում են նաև ուսուցման ինտերակտիվ մոդելի տարրեր՝ ինտերակտիվ տեխնոլոգիաներ, այսինքն՝ կոնկրետ ձևեր և մեթոդներ, որոնք թույլ են տալիս դասը դարձնելու անսովոր և ավելի հագեցած ու հետաքրքիր: Արտալսարանական աշխատանքները, մրցույթները, վիկտորինաները, ամենատարբեր ճանաչողական էքսկուրսիաները ներառում են ինտերակտիվ մոդելի տարրերը և մոդելի կիրառման դեպքում միտված են ուսանողին ուսուցանող համակարգում վերածել ինքնավար ակտիվ տարրի: Խնդիրը ուսումնադաստիարակչական գործընթացի բարդ համակարգում այդ համակարգի մեջ մտնող բոլոր տարրերի ճիշտ և նպատակային զուգորդումն է:

Բոլոր ժամանակներում էլ բարձր է գնահատվել արտալսարանային աշխատանքների, այդ թվում՝ ամենատարբեր մրցույթների, միջոցառումների, ճանաչողական էքսկուրսիաների դերը՝ ոչ միայն որպես ուսումնական գործընթ-

թացին օժանդակող, այլև մարդու, քաղաքացու մշակութային մակարդակի բարձրացման և գաղափարահոգեբանական նկարագրի կերտման կարևոր միջոց: Արտալսարանային աշխատանքների արդյունավետ կազմակերպումը մեծապես ազդում է դասավանդման որակի բարձրացման վրա՝ հետագայում անհրաժեշտություն առաջացնելով դրանք նոր ձևերով և մեթոդներով հարստացնելու: Նմանատիպ աշխատանքները ուսանողներին օգնում են՝ երևույթը ուսումնասիրելու և գնահատելու տարբեր կողմերից:

Բարձր դասարաններում (քոլեջում) «Հայ գրականություն» դասընթացի առարկայական ծրագրով նախատեսված հեղինակներից շատերի մասին խոսելիս և նրանց գործերը քննարկելիս զգացվում են որոշակի դժվարություններ (լեզվի, գրականության բովանդակության) կոնկրետ հեղինակների հետ կապված (Սայաթ-Նովա, Խաչատուր Աբովյան և այլն): Ուստի նպատակահարմար է դասընթացի շրջանակներում կատարել այնպիսի աշխատանքներ, որ ուսանողը ոչ թե խուսափի այդ հեղինակի մասին հավելյալ տեղեկություններ ստանալուց, այլ ձգտի իմանալ ավելին և փոխանցի իր յուրացրածը:

Փորձը ցույց է տալիս, որ Խ.Աբովյան հեղինակից ուսանողների՝ դպրոցում ստացած գիտելիքները սահմանափակվում են միայն այն երեք առաջնային դրույթների իմացությամբ, որոնք կապված են «Վերք Հայաստանի» վեպի Հառաջաբանի հետ: Խ.Աբովյան հեղինակին դժվար են յուրացնում, և այս խնդիրն առաջին հերթին լեզվական բարդության հետ է կապվում: Հայ գրականության այս շրջափուլի ձևավորման, Խ.Աբովյանին՝ որպես հայ նոր գրականության սկզբնավորողի և հիմնադրի, մանկավարժի, որպես հայ հեղինակի ճանաչելու և յուրացնելու նպատակով հարմար է կիրառել խմբային հետազոտության մեթոդը, այն է՝ կազմակերպել վիկտորինայի ձևաչափով մրցույթ-միջոցառում, որի կիրառման ընթացքում ուսանողները խմբով աշխատում են կոնկրետ խնդրի վրա: Համագործակցային ուսուցման մյուս մեթոդների նման խմբային հետազոտությունը ևս հիմնվում է ուսանողների փոխօգնության և համագործակցության վրա: «Ի տարբերություն մյուս մեթոդների, խմբային հետազոտության հիմնական նպատակը կոնկրետ խնդրի ուսումնասիրությունն է: Թեև խմբային հետազոտության մեթոդի հեղինակը Թել-Ավիվի համալսարանի պրոֆեսոր Շարոնն է, բայց մեթոդի ակունքներն առկա էին 20-րդ դարի սկզբի հայտնի փիլիսոփա Ջոն Դյուիի տեսության մեջ: Նա գտնում էր, որ դպրոցը պետք է սովորեցնի աշակերտներին միասին աշխատել՝ նրանց ներգրավելով իմաստալից ուսումնական ծրագրերում, որպեսզի հետագայում այդ ամենը կիրառեն կյանքում» [2, 95]:

Խ.Աբովյանի՝ իբրև գրողի, ճանապարհորդի, նորարարի, մանկավարժի, քաղաքացու մասին կարծիք ձևավորելու նպատակով վիկտորինան կազմակերպելու ընթացքում խնդիր է դրվում բոլոր կողմերից անդրադառնալու այս հեղինակին: Այս նպատակով կազմվում է հանձնարարվելիք գրականության ցանկ, իսկ վիտորինայի մասին հայտարարվում է բոլոր (ենթադրենք՝ առաջին) կուրսերում: Կարելի է նախորդ՝ Սայաթ-Նովա հեղինակից առաջ արդեն ասել մրցույթի մասին, և ձևավորել խմբեր՝ ցանկալի է 7-8 հոգանոց: Հաջորդ քայլը կլինի խմբային աշխատանքի համակարգումը: Հանձնարարվելիք գրականությունը տալուց հետո ուսանողները որոշում են իրենց աշխատանքի բովանդակային ընդգրկումը, նախանշում են ռեսուրսները, որոշում են խմբի անդամների պարտականությունները: Ուսանողներին պարտադիր ներկայացվում է վերջնաժամկետ, որի ընթացքում իրենք պարտավորվում են ընթերցել և յուրացնել հանձնարարված գրականությունը (Պիոն Հակոբյան, «Խաչատուր Աբովյան. կյանքը, գործը, ժամանակը» (1967), Պիոն Հակոբյան, «Վերելքը» (1982), Խ.Աբովյան, «Վերք Հայաստանի» (1959), «Պարապ վախտի խաղալիք» (1945), «Թուրքի աղջիկը» (1941), Ֆրիդրիխ Պարրոտ, «Ճանապարհորդություն դեպի Արարատ» (2006), հավելյալ գրականություն՝ Արշակ Չոպանյան, «Դեմքեր» (հ. 1-2, 1924-29), Արսեն Տերտերյան, «Աբովյանի ստեղծագործությունը» (1941), Վ.Պարտիզունի, «Խաչատուր Աբովյան» (1952), Ա.Սարինյան, «Հայկական ռոմանտիզմ» (1966)): Եթե խումբը բաժանվում է ենթախմբերի, ապա յուրաքանչյուր ենթախումբ ուսումնասիրում է որևէ ենթաթեմա (օրինակ՝ Պ.Հակոբյանի աշխատության գլուխները, ընդգրկունության պատճառով, կարելի է հավասարապես բաժանել ուսանողների միջև, ասենք՝ «Ծննդյան թվականը», «Դորպատյան տարիները», «Վերելք» և այլն), հետևաբար՝ անհրաժեշտ է նաև որոշել, թե ով է համակարգելու ենթախմբերի աշխատանքը՝ նշված ժամկետում ամեն ինչ հասցնելու նպատակով: Ուսանողներն իրենց հայեցողությամբ կարող են ընտրել իրենց խմբին անուն, որը, իհարկե, ուղղակի թե անուղղակի, կապված է լինելու Խ.Աբովյանի հետ (օրինակ՝ «Քանանա»՝ կապված Քանաքեռ անվան ստուգաբանություններից մեկի հետ, «Անմահ քանաքեռցի», «Առեղծված» և այլն), պատրաստեն սլայդներ կամ պաստառներ, որոշակի տարբերանշաններ, շապիկներ և այլն (նկ. 1, 2, 3):

Նկ. 1

Նկ. 2

Նկ. 3

Շատ կարևոր է աշխատանքի տարբեր փուլերում մանկավարժի աջակցությունն ուսանողներին. նախևառաջ, ուսանողների ուշադրությունը շարունակ կենտրոնացնել հետազոտվող թեմայի և իրենց կատարած աշխատանքի շուրջ

(խմբի անդամներին պարբերաբար կարելի է ներկայացնել մյուս խմբերի աշխատանքները,

խորհուրդներ տալ նրանց): Սա մրցույթի առողջ նախապայման է ապահովում, խթանում է ուսանողների երևակայությունը: Ենթադրենք՝ մի խումբը ծրագրել է Խ.Աբովյանի առակների ժողովածուից բեմադրել մեկ կամ երկու առակ: Սա արդեն ոգևորող հանգամանք է, մանավանդ, եթե նշվում է, որ ուսանողների ցանկացած ստեղծագործական աշխատանք, առավել ևս հավելյալ, անպայմանորեն հաշվի է առնվում մրցույթի ժամանակ: Այս փուլը պայմանականորեն կարելի է կոչել հետազոտության իրականացման փուլ: Սա խմբային հետազոտության ամենաերկար փուլն է, որի ընթացքում ուսանողները հավաքում են տեղեկությունները: Այս փուլում պարբերաբար անհրաժեշտ է պարզել, թե ինչ են անում ուսանողները, ինչ աջակցության կարիք ունեն:

Երբ հեղինակին ուսումնասիրելու և գրականությունը կարդալու ուսանողներին տրված ժամանակը սպառվում է, նախօրոք տեղեկացվում է մրցույթի անցկացման մասին: Շատ կարևոր է նաև գնահատման գործընթացը: Փորձը ցույց է տվել, որ ուսանողը նախևառաջ շահագրգռվում է այն հանգամանքից, որ գնահատումը կատարվելու է օբյեկտիվ ժյուրիի կողմից, որոնց կազմում ընդգրկվում են Խ.Աբովյանի տուն-թանգարանի գիտաշխատողները:

Վերջիններիս կարելի է խնդրել հարցաշար կազմել՝ օբյեկտիվությունն ապահովելու նպատակով: Հարցերը պետք է կազմվեն ըստ հանձնարարված գրականության, օրինակ՝ Պրուսացի ճանապարհորդ Ավգուստ ֆոն Հաքստհաուզենը պատմում է, որ Աբովյանի նախահայրը, ճնշվելով թշնամի լեկզիներից, իր մարդկանց և հարևանների հետ եկել է Երևանի խանի մոտ և նրանից թույլտվություն խնդրել բնակություն հաստատելու այն վայրում, որտեղ գտնվում էր Քանաքեռը: Հարց: Ո՞վ էր Աբովյանի նախահայրը, ըստ ավանդության թագավորական ո՞ր տոհմից էր սերված: Ե՞րբ և ի՞նչ հանգամանքներում են Աբովյանները հաստատվում Քանաքեռում:

Կամ՝ Խ.Աբովյանը Էջմիածնում սարկավագ և թարգման է կարգվում հիմնականում ռուս և եվրոպացի ճանապարհորդների համար, որոնք գալիս էին գիտական զանազան ուսումնասիրություններ կատարելու: 1829 թվականին Էջմիածին է գալիս Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտը՝ մի խումբ գիտնականներով: Հարց: Ներկայիս ո՞ր քաղաքն է Դորպատը, ո՞րն էր պրոֆեսորի այցի նպատակը, և ո՞ւմ հավանությունն էր ստացել արշավախումբը, որի համար նրան կցել էին զինվորական ուղեկցող:

Հաջորդ փուլը պայմանականորեն կարելի է կոչել հետազոտության արդյունքների ներկայացում: Սա հենց վիկտորինայի անցկացման փուլն է: Վերջի-

նիս նպատակները երկուսն են՝ նախ լուսաբանել կատարած աշխատանքը և, որ պակաս կարևոր չէ, կարողանալ գեղեցիկ, հետաքրքիր և հասկանալի ձևով ներկայացնել այն: Այն խմբերը, որոնք ունեն պատրաստած սլայդներ կամ պաստառներ, ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները:

Գնահատումը կատարվում է 5 բալանոց համակարգով: Ընդ որում, այն թիմը, որը պատասխանում է հակառակորդ թիմի կողմից չպատասխանված հարցին, վաստակում է հավելյալ միավոր: Ամեն դեպքում, գնահատման փուլում անհրաժեշտ է հաշվի առնել նախորդ փուլերում ցուցաբերած ակտիվությունն ու նախաձեռնողականությունը, կարևոր է նաև հաշվի առնել, թե որքանով են խմբի անդամները համագործակցել:

Խմբային հետազոտության մեթոդի կիրառման այս՝ արտալսարանային աշխատանքներ (մրցույթներ, վիկտորինաներ) կատարելու ձևը թույլ է տալիս իրագործել մի քանի նպատակներ.

ա) խմբային հետազոտությունն ուսանողներին սովորեցնում է համակարգված և վերլուծականորեն հետազոտել կոնկրետ խնդիրը (խնդիրները),

բ) ուսանողները խորությամբ յուրացնում են ուսումնական նյութի բովանդակությունը,

գ) ուսանողները սովորում են համագործակցել՝ խնդիրը հետազոտելու ընթացքում,

դ) արտալսարանային աշխատանքներ կատարելու հետաքրքրություն և փորձառություն է առաջացնում:

Այսպիսով՝ ուսանողները յուրացնում են բովանդակությունը, զարգացնում են հետազոտելու և համագործակցային աշխատանքի հմտություններ:

Այս մեթոդը թույլ է տալիս պարբերաբար փոխել խմբերի ձևավորման և թեմայի ընտրության հերթականությունը: Որոշ դեպքերում դասախոսն ինքը կարող է ընտրել թեմաներ, ապա, ըստ ուսանողների հետաքրքրության, ձևավորել խմբեր: Խմբերում ընդգրկել կարելի է ոչ միայն լավ, այլև միջին և բավարար ընդունակություններ ունեցող ուսանողներին: Նպատակը ոչ թե ուժեղների միջև մրցություն կազմակերպելն է, այլ համեմատաբար թույլ ուսանողներին շահագրգռելը, արտալսարանային աշխատանքի (մրցույթի) միջոցով նաև նրանց՝ դասապրոցեսի մեջ ներգրավելը: Բացի այդ, ուսանողներին հնարավորություն է տրվում զարգացնելու ընկերների հետ բանակցելու և փոխզիջումների գնալու հմտությունները: Մրցույթի ձևաչափը հնարավորություն է տալիս, որ խմբի մյուս ուսանողները, որոնք ընդ-գրկված չեն թիմում, ևս մասնակցեն վիկտորինային: Համագործակցային մեթոդով արտալսարանային աշխատանքների կատարման ժամանակ ուսուցչի դերակատարումը ուղղորդումն է և օգնությունը տեղեկությունների փոխանակման գործընթացում:

Պարզ է, որ նմանատիպ միջոցառումներ բոլոր կուրսերում չէ, որ հնարավոր կլինի անցկացնել, դա կախված է կուրսերում ուսանողների ընդհանուր մակարդակից ևս:

Վիկտորինայի անցկացման համար, բացի Աբովյանից, կարելի է ընդգրկել հայ գրողներից շատերին՝ Եղ.Չարենց, Ակ.Բակունց, Գ.Մահարի և այլն:

Եզրակացություն: Խմբային հետազոտության մեթոդի հնարավորությունների օգտագործումն ու կիրառումը արտալսարանային աշխատանքների ընթացքում նպաստում է ելքային խնդիրների իրագործմանը՝ ուսանողին սովորեցնել համակարգված և վերլուծականորեն հետազոտել գրողին և նրա ստեղծագործությունը, խորությամբ յուրացնել ուսումնական նյութի (և ոչ միայն) բովանդակությունը, սովորել համագործակցել խնդիրը հետազոտելու ընթացքում: Գրական վիկտորինայի ձևաչափը նպաստում է համակողմանիորեն հետազոտելու հեղինակին ու նրա ստեղծագործությունները, հետաքրքրություն է առաջացնում՝ խորությամբ կարդալու և վերլուծելու գրողների կենսագրության մանրամասները ուսումնասիրելու, ուսումնասիրելու ժողովածուները, ստեղծագործությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Подласый И.П.** Педагогика. Новый курс: Учебник для студенческих педагогических вузов.- М., 1999:- 576 с.
2. **Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս. և ուրիշ**. Համագործակցային ուսուցում, Ձեռնարկ.-Երևան, 2006.-124 էջ:

А.Т. МАНУКЯН

РОЛЬ ВНЕКЛАССНЫХ РАБОТ В ПРОЦЕССЕ ПРЕПОДАВАНИЯ В СРЕДНЕСПЕЦИАЛЬНЫХ ПОТОКАХ (НА ПРИМЕРЕ ЛИТЕРАТУРНОЙ ВИКТОРИНЫ)

Представляется эффективный способ получения опыта во время проведения внеклассных работ методом группового анализа в формате викторины.

Ключевые слова: метод группового анализа, Х. Абовян, внеклассная работа.

H.T. MANUKYAN

THE RULE OF THE EXTRA CURRICULAR ACTIONS IN THE PROCESS OF TEACHING IN A SPECIALIZED DEPARTMENT (FOR EXAMPLE LITERARY QUIZ)

There is an effective way of gaining experience during extracurricular work using the method of group analysis, in the format of a quiz.

Keywords: method of the group analysis, Kh. Abovyan, extra curricular work.